

որովհետեւ նրա օրով կատարվին: Այժմ անսովորական շատ պատուական մարդիկ են և գուցէ համարձակ կարող էք տալ զրանց մասին իմ կարծիքները: Նրա թղթերը սկսեց խօսել յունական խնդիր մասին, Կամբոտա կտրեց նրա խօսքը, ասելով, որ նա արտաքին քաղականութեամբ չէ զբաղվում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դորեւում պրուսական ազգային ժողովին ներկայացվեցաւ իշխան Բիսմարկի նախագիծը կայսերական եկամուտների միացորդների պրուսական բաժնի գործածութեան մասին: Այդ նախագիծը պատճառով պրուսական ազգային ժողովի մէջ ազմուշի փիլիսոփայութիւնները եղան և Բիսմարկի առաջարկութիւնը խիստ քննութեանը ենթարկվեց յետոյ, յանձնվեցաւ մասնաժողովին: Նրա մասնաժողովը ներկայացրեց փոփոխված նախագիծը և ժողովի մէջ նրա մասին փիլիսոփայութիւնները սկսվեցան, իշխան Բիսմարկ ընդհանրեց նրանց, յայտնելով, որ կառավարութիւնը մտադիր է շուտով արձակել ժողովը և որ նրան միայն հինգ օր է մնում միւս նախագիծները քննելու համար: Բիսմարկի այդ յայտնութիւնը շատ ծանր տպաւորութիւն գործեց ժողովի վրա, որ, մերժելով իր ընտրած մասնաժողովի առաջարկութիւնները և փիլիսոփայութիւնները դադարեցնելով, ընդունեց Բիսմարկի նախագիծը առանց որ և է փոփոխութեան:

Ֆրանսիական սենատը նորերում հաստատեց երկու երկաթուղիների նախագիծեր, որոնք վաղուց առաջարկված էին մինիստր Ֆրէյսինէից: Աֆրիկայում ֆրանսիական առևտուրը զորացնելու և ընդարձակելու համար: Ֆրանսիական պատգամաւորների ժողովը տպագրական օրէնքները երկրորդ ընթերցանութենից յետոյ վերջնականապէս հաստատեց և սկսեց զբաղվել Բարի առաջարկութեան քննութեամբ պատգամաւորների ընտրութիւնները ցուցակներով կատարելու մասին:

Դորեւում ստացված լուրերից երևում է, որ Անգլիայի և բոսնիայի մէջ բանակցութիւններ են կատարվում խաղաղութեան մասին: Անգլիական կառավարութեան առաջարկութեան համաձայն բոսնիայի յայտնեցին այն պայմանները, որոնցով նրանք պատրաստ են հաշտվել: Դորեւում Գլադստոնի մինիստրութիւնը ժողով կազմեց այդ պայմանները քննելու համար:

Սուլթանի վրա շատ լուր տպաւորութիւն գործեց այն լուրը, որ իշխան Բիսմարկի համաձայնել է զեկապարեկ զեկապանների բանակցութիւնները Բ. Գրան հետ: Նրա կարծիքով մինչև այժմ Կերմանիան միւս պետութիւններից ամենից շատ է համարվել թիւթիայի դրութեանը և այժմ սուլթանը յոյս ունի որքան կարելի է փոքրացնել այն զինուորների քանակութիւնը, որ նրանից պահանջում են Սուլթանին շրջապատողներից մի քանիները պատմում են, որ սուլթանը մինչև անգամ այդպիսի խոստումներ է ստացել բերլինից: Ապագայ բանակցութիւնների մասին այսքանը միայն յայտնի է, որ նրանք գաղտնի կը կատարվեն:

ՆԱԽԱԿ ԹԻԻՐԳԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 14 փետրվարի 81

Ազգին և Գրան յարաբերութիւնները ճիշտ հակացնելու համար եթէ բանաստեղծ ըլլայինք՝

պիտի ըսէինք, հայկական ուրուականը սպառնալից զիշեր ցերեկ Սարգի աչաց առաջ կը թափառէ: Արեւ ինչ կերպով մեկնել տան և հինգ օրէ ի վեր հայոց մտաւոր շարժման դէմ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները: Արքունեաց օրդան (Օսմանլի) կը գոչէ, թողուր որ հայ նոր սերունդը հին յիշատակաց գաղափարներով կրթուի, տաճիկ ընկերականութեան կազմակերպութիւնը փոխողի ենթարկել է: Այս սկզբունքն կը տիրապետէ կառավարական շրջանակներու մէջ. օրէնք, իրաւունք ամեն ինչ կը լուէ, և հաւանաբար սկսած է բայց հայ սերունդին սրտին մէջէն ազգային զգացումը ջնջել Սարգի պէս գաճաճ քաղաքէն ելող անհոգիները, համոզուած ըլլալով, թէ մեր ազգային գոյութիւնը ընթացիկ ընել Գրան յատակագիծն է. գաղտնիք մը չէ թէ ինչ կընէ Կուրը Հայաստանը նիւթապէս տկարացնելու համար. այժմ բարոյական հարուածները կը սկսի տալ աւելի ընդարձակ սահմանի մը մէջ: Առաջին հարուածը հայոց պատմութեան դէմ է, իբր գլուխ չարեաց: Հայաստան չը կայ, այլ Քիւրդիստան կայ, հայ ազգութիւն չը կայ, այլ կործանական ժողովուրդ մը կայ, ուրեմն ինչ պատմութիւն պիտի գրէք, այդպէս կը պատասխանէր կրթութեան պաշտօնէին հայ տպագրիչներուն, որք ազգային պատմութիւն տպագրելու հրամանը խնդրեցին, և այդ հրամանը կը զանաչուէ ու կը կարծես թէ օրացոյցները իսկ յեղափոխական լինին. բայց դժբաղդ որ հայ թագաւորաց անունները կը պարսեանակն, սուրբերը կը յիշատակեն, մեր հին զինուորական գոյութիւնը կը յիշեն, Կաթողիկոսի զինադրոշմը ունեն, ուրեմն թունաւոր են, և մաքսատունը կարգելէ գանձը: Հայաստան խրկել: Կը կարծուի թէ ուսուցանութիւնը գրավաճառներու կրպակներն ալ աչքից է այդ օրացոյցներն մէկ ձեռքէ վերցնելու: Իսկ Զ-ի գերեզմանի պատկերը խեղճ Գաֆուքեան գրավաճառին գերեզմանը կը պատրաստէ. կը բռնեն մարդը և բանտ կը նետեն, որովհետեւ Լևոն Լուսինեանի պատկերը և Մար Հայաստան վիմագրութիւն կը վաճառէ. ի գուր խեղճ կառարկէ թէ <25 տարի են այդ տեսակ պատկերներ կան, ինչու հրաման մը չըրին որ վերցնեն. Եւրոպայ փորագրված են դժբաղ, մաքրեցնանցած և վաճառած են մաքսային տուրքը, ինչու չարգելեցիք կըսէ:—Բայց Պոլսոյ մէջ ըլլալին կը մոռնայ,—ով պիտի մտիկ ընէ. մտադիր են արհաւիրք տարածել: Պոլսոյ եւրոպական մասուրը կը բողբոքէ, ինչու չէք արգելել ուրեմն և մեծն Ալէքսանդրի, Կաթիլի պատկերներն—կըսեն: Շատ մը թախանձանայ վրա խեղճ գրավաճառը կարծիքն, բայց ինչ վիճակի մէջ, այսօր հիւանդ անկողին է և կիսաքնն կը վախճուի: Այլ այն խեղճ տղայներն ինչ ընենք, որք փողոցները սիկաւի թուղթեր կը վաճառեն և որք ամենքն միասին նետեցին խաւարը. ապա շատ են այդ տղաքը, ինչ ըրինք կը հարցնեն և պատասխանի տեղ ձեռք կուտան: Արեւելի թուղթի վրա շահագէտները վարդանի պատկերը գրած փորագրած են, և այս տղաքը գանձը կը ծախեն. երբ իրենց կըսեն թէ այս է յանցանքին, այս պատկերը, կապուշին մէկը կը պատասխանէ, թէ <առիկայ մեր Ատուուածն է, մեր եկեղեցիներն լեցուն են ասով, նայի՛ք կրնանք անոնք ալ վերցնել:—Ամենք ալ, անոնք ալ> կը քրտախախտեն, ստիկանութեան նախարարը—Ֆէրիթ-բեյ, գերեզմաններու տիւրը գիւղը, ցան և ցիր խաւարը մօտ փոքրիկ մատուռ մը ունինք, վարդանի նուիրած, կըսեն թէ պիղծ ձեռքերն մտադիր են յանգզել մինչև հոն համեմ, բայց հոն անշուշտ վարդանի տուրին կը հանդիպեն, մեր համալին և ինչ հոն են: Սակայն իբրեւ նախարարն վարդանանց հանդէս կատարուիլն խոստի արգելուցաւ. քանի որ ազգային ըզգացումներն սկսան զարթոնալ, վարդանանց օրը Կ. Պոլսոյ ժողովուրդի պաշտելի օրն եղած է. ժողովուրդը խուռն ըզգացութեամբ զարթոնելը կը ընայ, երբեք, ճառախօսութիւններ կը լինին, թէպէտ ոչ մեծ արգելքը, բայց և այնպէս ոգևորութիւն մը կը տիրէ. քարոզիչները ինքզինքնին Ղևոնդի ժառանգ կը համարեն նոյն օրն, ժողովուրդն ալ ընականորէն Աւարայրի դիւցազանց թուոներն կը կարծէ ինքզինքն, պահ մը Ծրդ դարը կը վերանայն: Գիշերներ թաղանթները վարդան կը ներկայացնեն, եկեղեցականները վարդան կը ներկայացնեն, եկեղեցականները այն իրիկները իրաւունք ունին երթալ Վատիկանի զգալիները կը մոռնան թաղանթութեանց արհեստը և կը ծափահարեն, վերջապէս

ամեն դասի հայեր նոյն օրն կերպարանափոխ են. իսկ այս տարի անցեալ տարին յիշելով պիտի գոհանանք. Բայց լաւ եղաւ այս զեպքը. գուցէ մեր 20 տարուան այս օրերու ճառերն այնքան խոր տպաւորութիւն մը ըրած չըլլան հայ ժողովուրդի վրա, որչափ այս համբար թէ <արգելաւ է ասեղ վարդան>—Եթէ անցեալը այսքան երկիւղ կաղէ Գրան, ապա որչափ առաւել ներկայն—Բաւական ատեն է սովորութիւն մը տիրած է. ամեն թաղ երբեմն զիշերները կամ կիրակի ցերեկները դասախօսութիւններ կը ըլլան, ժողովուրդը կը թափ մտիկ ընելու, և արդիւնքն բարեգործական գործի մը կը յատկանայ. կըրթական, ուսումնական նիւթոց վրա կը խօսեն. պ. Երեմի մը քանի անգամ խօսեցաւ իւր ի Հայաստան ճանապարհորդութեան վրա, Հայաստանի կրթական վիճակը նկարագրեց և թէ ինչ է Միացեալ—ընկերութեանց ազդեցութիւնը ի հայրենիս—Թիւրք ակադէմիկները համար անախորժ խօսքեր, ուրեմն խաբաններն ալ պէտք է արդիւլէ և ահա սաստիկ հրաման մը որ այլ ես այդ ժողովուրդային գումարումներն տեղի չունենան: Նայենք ինչ պիտի ըլլայ վերջը—Իբր Կ. Պոլսէն կը սկսեն, պիտի ուզեն Հայաստան խղիւղ. Հայաստանի լսարանները, Հայաստանի գումարումներն պիտի խախտեն—Բայց ունենք եկեղեցին. ժամանակ է որ քարոզիչներն հասկնան թէ ինչ է իրենց կոչումը. չը մոռնանք նաև թէ Հայաստանի եկեղեցիներուն մէջ աշխարհականք ալ կրնան քարոզել:

Ասոնք են արդեօք այն բարենորոգումներն որ խոստացաւ մեզ Եւրոպա. տիւր լուրեր ամեն օր Հայաստանէն. Պարսկաստանէ վերադարձած ասպատակները կը շարունակեն կառավարութեան քաջալերութիւնը և պաշտպանութիւնը վայելել. հայոց նկատմամբ ծանր տեղեկութիւններ կը հասնեն Բ. Գրան, զոր անմիջապէս պատրիարքարանի ուշադրութեանը կը յանձնէ. տեղական իշխանութիւնք կասկածաւ աչքերով ըսկաւած են գիտել հայոց շարժումները: Բ. Գրան ու պատրիարքարանի մէջ բանակցութիւններ կը շարունակեն—Երկու օր առաջ պատրիարքը Սարգի հետ տեսակցութիւն մը ունեցաւ, գառն տեսակցութիւն մը. <Ամեն ինչ, տէր նախարար, կարող ես իմ անձիս ընել, կըսէ, բանտ, աքսոր և մահ>, եթէ ունիս մի հայիկ ինձ հետ. բայց էր այդքան կը հալածես ազգս, մեր գորաւոր ծառայութեանց այս է փոխարէնը. միթէ կը կարծէք թէ այս ընթացքն օգտաւէտ է օտ. կայսրութեան: Հայ ազգութիւնը ջնջել, բարձրագոյն տեսակցութիւն մը, ձեռք կարողութիւններն վեր է. պարտաւոր եմ այսուհետև ուղղակի սուլթանին դիմել, իրաց վիճակը ճշմարտագէտ նորա ծանօթացնելու: Խօսակցութեան համաձայնութիւնը այս է. այսօր կըսուի թէ պատրիարքը արդարեւ տեղեկագիր մը կը պատրաստէ սուլթանին ներկայացնելու և նորա հետ տեսակցել Հայաստանի վերանորոգման խնդրոյ մասին:

Մահմուդ Եղիմ բաշա կը մաքառի Սարգի դէմ հայոց մասին հետեւած քաղաքականութեան համար: Պատրիարքը արդարեւ դարձեալ խնդրոց կարգն էր, բայց թուի թէ Մահմուդի ազդեցութեամբ ետ մնաց <եթէ պատրիարքը արդարեւ, ըսած է, զեկապանք 24 ժամուան մէջ կը վերադարձնեն գնաւ և կը բազմեցնեն իր աթոռը, և այն օրն ահա հայկական խնդիրն կենդանի է>:

Ինչ կըսէ Անգլիայի դեսպանը, ինքն որ այնքան Սարգի պնդեց Հայաստանի բարենորոգմանը կարևորութեան մասին, և որ պատրաստուած է անձամբ սուլթանին խօսել այս նիւթին վրա:

Հայկակ

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պարբերի «Temps» լրագրի թղթակցը հեռագրում է Վիեննայից, որ մեծ պետութիւնների զեկապաններ Կ. Պոլսի մէջ, իւրաքանչիւր առանձին, յանձնեցին Բ. Գրանը իրանց կառավարութիւնների պատասխանները, որոնցով Բ. Գրանը յայտնվում է պետութիւնների համաձայնութիւնը նոր բանակցութիւններ սկսելու մասին և որոնցով թիւթիայի կառավարութիւնը հրաւիրվում է որոշել իր զինուորների չափը յոյն թիւթիայի զինուորների խաղաղութեան համար:

Նոյն թղթակցը հաղորդում է, որ եթէ թիւթիայի զինուորները բաւականացուցիչ կը համարվեն, պետութիւնները կը համոզեն Բուսաստանին հաշտվել, իսկ եթէ այդ զինուորները

բաւականացուցիչ չեն լինի, այն ժամանակ Կերմանիան կառավարի իր նախագիծը և այդ օրպէից նա կը սկսի նշանաւոր դեր խաղալ արևելեան գործերի մէջ: Տարածված լուրերը Կերմանիային յոյն-թիւթիայական վիճի զեկապարութիւնը յանձնելու մասին անհիմն են: Մի քանի պետութիւններ յայտնի պատճառներով չէին կարող ենթարկվել նրա հեղինակութեանը: Կերմանիայի դերը նման կը լինի Ֆրանսիայի դերին միջնորդ դատարանի հարցի մէջ:

—Աթէնքից լրագրիներին հեռագրում են, որ յունական պատգամաւորների ժողովի մէջ պատգամաւորներից մէկի հարցին Կ. Պոլսի մէջ ըսուված բանակցութիւնների մասին, Կուրմանիայի պատասխանեց. <Կառավարութիւնը յունական գործի միայն մի վճիռ է ճանաչում, զա Բերլինի կոնֆերանցիայի վճիռն է: Գունական խնդիրը վճառ համարելով, կառավարութիւնը աւելորդ է համարում նորից նրան քննելու>:

—Լոնդոնից լրագրիներին հեռագրում են, որ համալսարանների ժողովի մէջ մարկիզ Հարթինգտոն յայտնեց փետրվարի 13-ին, որ նրան յայտնի է Բուսաստանին տուած մի խոստումը, որի համաձայն Անգլիան պարտաւորվել էր զուրա տանել Կանդահարից իր զորքերը: Չարլ Գիլի յայտնեց, որ Անգլիան խորհուրդ տուեց Գունաստանին ոչ մի քայլ չանել Կ. Պոլսի մէջ կատարվող բանակցութիւնների վրա ճիշտ գործելու նպատակով: Մի և նոյն ժամանակ պետութիւնները վճռել են խորհուրդ տալ Թիւթիային և Գունաստանին, որ նրանք բանակցութիւնների կատարվելու ժամանակ միմեանց դէմ թշնամական գործողութիւններ չը սկսեն:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10հոկտեմբ. 20 փետրվարի: Պարլամենտի մէջ քննվում է Այտոնի առաջարկութիւնը Էանդահարի վերաբերութեամբ: Սարգիւրի, յիշեցնելով, որ Բուսաստանը իր նախկին խոստումներին հակառակ զբաղեց իր վա, ընդարձակեց իր տիրապետութիւնը Կասպից ծովի մօտ, խառնվում էր Աֆգանիստանի ներքին գործերի մէջ, յայտնեց, որ պէտք չէ բաւականանալ Բուսաստանի խոստումներնով և հարցրեց, թէ ինչ միջոցներ պէտք է գործադրել բրիտանական շահերը պաշտպանելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 փետրվարի: Դո-10հոկտեմբ. լրագրին հաղորդում են Լոնդոնից. Իրանդիայի փոխարքան յայտնեց, որ ստիպողական բիլլը օյժ կուենայ մի քանի նահանգների մէջ:

Կ. ՊՈԼՍ, 20 փետրվարի: Գեսպանների թարգմանները զարմանք յայտնեցին Ասիական շահին Բ. Գրան պատասխանը զեկապանների գրութեանը ուշացնելու պատճառով և առաջարկեցին շտապեցնել այդ գործը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 փետրվարի: Նրէկ վերադարձաւ արտասահմանից Սեփիւնի Նիկոլայ Միխայլովիչ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 փետրվարի: Պաշտօնապէս հաղորդված է. գնեկալէյ յոսենանտ Զօմարջիճէ Նշանակված է հրամանատար կովկասեան երկրորդ զօրաբաժնի, Կեդիկ կովկասեան զինուորական շրջանի տեղական զօրքերի գլխաւոր, գնդապետ Մարամաճ գրազունների Նեփեկօրօյսկի գունդի հրամանատար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 փետրվարի: ՄՈՒՅԱՅԱՅ լրագրի հաղորդում է իբրեւ լուր, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Սարգի թով թողնում է իր պաշտօնը: Առում են, որ նրան կը փոխարինեն գնեկալ Մասկով կամ նախկին մինիստր Գոլովին:

ՎԱՇԻՆԿՏՈՆ, 21 փետրվարի: Նրէկ սկսեց իր պաշտօնը վարել նախագահ Գարֆիլդէ:

ՆԵԱՊՈԼ, 21 փետրվարի: Իսկիա կղզու վրա աւերող երկրաշարժ պատահեց: Մի քանի մարդիկ սպանված են:

Փարիսի—հրատարակող ԳԻՐԻՎԵՐ ԱՐԴՐՈՒՆԻ